ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ _____ Ի. Մարտիրոսյան

Կոտայքի տարածաշրջանային

պետական քոլեջի կառավարման

խորհրդի նախագահ

16 մայիսի 2018թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԱՌԱՐԿԱՆԵՐԻ(ՄՈԴՈՒԼՆԵՐԻ) ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ, ՄՇԱԿՄԱՆ,ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ

Քննարկվել և հավանության է արժանացել

ԿՏՊՔ-ի ուսումնամեթոդական խորհրդի կողմից

«24» մայիս 2018թ.

ՀՐԱԶԴԱՆ 2018

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1.Առարկայի (մոդուլի) ուսումնական ծրագիրը հիմնական կրթական ծրագրի պարտադիր մասն է և դասավանդվող առարկայի (մոդուլի) նյութը, ուսումնական պարապմունքների տեսակները և ժամային բաշխվածությունը կանոնակարգող հիմնական ուսումնամեթոդական փաստաթուղթը:

1.2.ԿՏՊՔ-ում մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնական պլաններում ներառված բոլոր առարկաների(մոդուլների) մշակման, վերանայման, հաստատման գործընթացն իրականացվում է համաձայն սույն կանոնակարգի:

1.3.Առարկայի(մոդուլի) ծրագիրը վերանայելու, մշակելու, գնահատելու և հաստատելու համար հիմք են ընդունվում լիազոր մարմինների (ԿԳՆ) որոշումները, հրամանները, գրությունները:

1.4.Քոլեջի դասախոսական կազմի և ամբիոնների համար ուսումնական ծրագրի առկայությունը պարտադիր է տվյալ առարկայի(մոդուլի) ուսումնառությունը կազմակերպելու համար:

1.5.Ծրագրի մեկ օրինակը պահվում է ամբիոնում, երկրորդը՝ ուսումնական մասում:

1.6.Ուսանողն իրավունք ունի ծանոթանալու ուսումնական ծրագրերին:

2.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄՈՒՄԸ

2.1.Նոր առարկայի (մոդուլի) կամ առկա առարկաների(մոդուլների) ծրագրերը վերանայելու, կազմելու համար նախաձեռնող կողմերն են՝

ա.ամբիոնը

բ.տվյալ դասընթացը պարապող դասախոսը

գ.ուսումնամեթոդական խորհուրդը:

2.2.Ուսումնական ծրագիրը կազմվում է առարկան(մոդուլը) դասավանդող մասնագետի կողմից:

2.3. Ծրագրերը կազմելիս ամբիոնի դասախոսները պետք է առաջնորդվեն պետական կրթական չափորոշիչներով, տվյալ մասնագիտության ուսումնական պլանով, ՀՀ կրթության և գիտության նախարարության առաջարկներով և սույն կարգի դրույթներով:

2.4.Ծրագրի ստուգումը կատարում է ամբիոնի վարիչը: Ստուգման արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստում:

2.5.Ծրագիրը համարվում է ընդունված, եթե այն համապատասխանում է պետական

չափորոշիչների պահանջներին, ուսումնական պլաններին և սույն կանոնակարգի դրույթներին: Հակառակ դեպքում ամբիոնի վարիչը, հիմք ընդունելով ամբիոնի եզրակացությունը, լրացուցիչ ժամանակ է տրամադրում ծրագրի լրամշակման համար:

2.6.Ամբիոնի նիստի դրական եզրակացությամբ ընդունված ուսումնական ծրագիրն ուղարկվում է ուսումնամեթոդական խորհուրդ՝ քննարկելու և հաստատելու համար: Քննարկման արդյունքում բացահայտված թերությունները վերացնելու համար ծրագիրը կարող է վերադարձվել ամբիոն:

2.7Քոլեջի ուսումնամեթոդական խորհրդում հաստատվելուց հետո ուսումնական ծրագիրը ներկայացվում է քոլեջի տնօրենին՝ վերջնական հաստատման համար:

2.8.Ուսումնական ծրագրի կազմումը , հաստատումը իրականացվում է ուսումնական գործընթացի սկզբից 2 շաբաթ առաջ:

2.9.Անհրաժեշտության դեպքում ուսումնական ծրագիրը կարող է ենթարկվել շտկումների:

2.10.Եթե տվյալ առարկայի համար առկա է ՀՀ կրթության և գիտության նախարարության համապատասխան բաժնի կողմից կազմված և երաշխավորված ծրագիր, ապա դասախոսն իրավունք ունի օգտագործելու այն և նոր ծրագրի կազմումը պարտադիր չէ:

3.ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

3.1.Առարկայական ուսումնական ծրագրի կառուցվածքը ներառում է առարկայի նպատակը, խնդիրները և բովանդակությունը, որը պետք է համապատասխանի մասնագիտությունների ուսումնական պլաններին և պետական կրթական չափորոշիչներին:

Առարկայական ուսումնական ծրագիր մշակելիս և կազմելիս դրանում հստակ արտացոլվում են հետևյալ կետերը.

- առարկայի նպատակը և խնդիրները,
- առարկայի տեղն ու դերը տվյալ մասնագիտությամբ ուսուցումը կազմակեր-պելու գործընթացում,
- առարկայի տրամաբանական և բովանդակային փոխկապակցվածությունը այլ դասընթացների հետ,
- դասընթացի յուրացման արդյունքներին ներկայացվող պահանջները,

- դասընթացի ծավալը և ուսումնական աշխատանքների տեսակները (տեսական,գործնական)
- դասընթացի անցկացման ուսումնամեթոդական և տեղեկատվական ապահովվածությունը,
- առարկայի դասավանդման նյութատեխնիկական ապահովվածությունը,

3.2. Դասընթացի(մոդուլի) ծրագրերը կազմելիս ՄՈՒՀ-ն առաջնորդվում է ՊԿՉ-ներով, որոնք փոփոխության ենթակա չեն: Մոդուլային ծրագրերը մշակելիս անհրաժեշտության դեպքում հնարավոր է 5% ժամային և 15% բովանդակային փոփոխություններ կատարել:Մոդուլային ծրագրերը ներառում են՝

- մոդուլի դասիչը
- մոդուլի նպատակը
- մոդուլի տևողությունը
- մուտքային պահանջները
- ուսումնառության արդյունքները
- կատարման չափանիշները
- գնահատման կարգը
- ծրագրային մանրամասները
- մեթոդաբանությունը և ռեսուրսները
- ուսուցումն ըստ տեսական և գործնական պարապմունքների

3.3.Հանրակրթական առարկաների ծրագրեի մշակումն իրականացվում է ավագ դպրոցների ծրագրերի հիման վրա:

3.4.Ընտրովի առարկաների ծրագրերը մշակելիս հաշվի է առնվում այն հանգամանքը, որ տվյալ առարկան պետք է նպաստի ուսանողների ձեռքբերած հմտությունների զարգացմանը:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն Գ. Գևորգյան